153-
28
4-45

2004

3697

280
853-46

376

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

4005

850-42

ԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՈՏՈՆԷԻ Յ

Ընդ՝ի գանձել՝ի մտի յիւրաքանչիւր աւուրս տարւոյն, ՝ի յագուրդ հոգւոց հաւատացելոց

ԱՐԱՐԱՏՅԱՆ-ՀԱՅՐԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

376

ԴՈՄԻՒՈՆԻՍ

Տպագրութեամբ Ամենայն Հայոց

1838

11223

ԿԵՂԾԱԿՈՒՐ

ԲՐԱՎԱՏԱՆԻՑ։

ՅՈՒՆՎԱՐԻ։

1 · Եւ ասէ ցիս · շատ են քեզ շնորհք իմ · զի զօրութիւն իմ՝ի տկարութեան կատարի ։ 2 · Կոր · ԺԲ · 9 ։

2 · Որ յիւր որդին ոչ խնայեաց՝ այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա · զինարդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ ։ Հռովմ. Ը · 32 ։

3 · Եւ ասեն առաքեալքն ցՏէր · յաւելլ մեզ հաւատս ։ Ղուկ · ԺԷ · 5 ։

4 · Եւ Յիսուս ասէ ցնա · ասացեալ՝ թէ կարող ես · ամենայն ինչ հնարաւոր է այնմ · որ հաւատայն ։ Մարկ · Թ · 22 ։

5 · Հաւատամ Տէր · օգնեա՛ անհաւատութեանս իմոում ։ Մարկ · Թ · 23 ։

6 · Զի ամենայն ինչ ձեր է ։ 1 · Կոր · Գ · 22 ։

7 · Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս · և մի կորիցեն ՝ի յաւիտեան · և մի ոք յափշտակեսցէ զնոսա ՝ի ձեռաց իմոց ։ Յովհ · Ժ · 27 ։

8 · Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառաւք ՝ի Քրիստոս Յիսուս ։ Փիլիպ · Դ · 19 ։

9 · Զամենայն զոր տայ ինձ Հայր , առ իս եկեսցէ · և որ զայ առ իս , ոչ հանիցս արտաքս ։ Յովհ · Զ · 37 ։

10 · Տէր՝ առ ո՞վ երթիցուք · բանս կենաց յաւիտենականաց ունիս ։ Յովհ · Զ · 69 ։

11 · Բայց որ համբերեացն իսպառ , նա կեցցէ ։ Մատթ · Իդ 13 ։

12 · Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք ։ Յովհ · ԺԴ · 15 ։

13 · Զ՝ան այսորիկ և զուք եղերուք պատրաստք , զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ զայ Որդի մարդոյ ։ Մատթ · Իդ · 44 ։

14 · Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն

իմ՝ արարիչ զայն · զի փառաւորեսցի Հայր յորդի։ Յովհ. ԺԴ. 13։

15. Թէ այդպէս իցէ՝ ոչինչ դատապարտութիւն է այնոցիկ՝ որ ’ի Քրիստոս Յիսուս։ Հռովմ. Ը. 1։

16. Զգաւ եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունիցի՝ սա չէ նորա։ Հռովմ. Ը. 9։

17. Եկեցուք այսուհետև՝ զուցէ ’ի թողուլ զաւետիսն՝ ’ի մնանելոյ ’ի հանգիստն նորա՝ զտանիցի ոք ’ի ձէնջ նուազեալ։ Եբրայ. Դ. 1։

18. Արդ ուրեմն նուազեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ։ Եբրայ. Դ. 9։

19. Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան՝ առանց մեղաց։ Եբրայ. Դ. 15։

20. Եթէ մեղիցէ ոք՝ ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս

Դրիսատոս՝ զարդարն և զանարատն։
1 · Յովհ · բ · 1։

21 · Անպաշխարեցէք՝ զի մերձեալ
է արքայութիւնն երկնից։ Մատթ ·
դ · 2։

22 · Զի ոչ եկի կոչել զարդարս՝
այլ զմեղաւորս։ Մատթ · թ · 13։

23 · Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ
ծանեաք զնա, եթէ զպատուիրանս
նորա պահիցեմք։ 1 · Յովհ · բ · 3։

24 · Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէք՝
և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք,
բախեցէք՝ և բացցի ձեզ։ Ղուկ · ժա · 9։

25 · Իսկ եթէ զուք որ չարքդ էք՝
գիտէք պարգևս բարիս տալ որդւոց
ձերոց, որչափ ևս առաւել Հայր ձեր
յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ
խնդրենն 'ի նմանէ։ Ղուկ · ժա · 13։

26 · Զի մեղք ձեզ ո՛չ տիրեսցեն ·
քանզի ո՛չ էք ընդ օրինօք՝ այլ ընդ
շնորհօք։ Հռոմ · դ · 14։

27 · Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս
իմ պահեսջիք։ Յովհ · ժդ · 15։

28 · Բայց ամրդ ազատացեալք՝ի մեղացն՝ և ծառայեալք Աստուծոյ՝ ունիք զպտուղ ձեր՝ի սրբութիւն, և վախճան նորա կեանք յաւիտենից։ Հռովմ. Ի. 22։

29 · Վասն զի ասահ եմ յայդ, թէ որ սկըսաւն՝ի՝ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ մինչև յօրն Յիսուսի Քրիստոսի։ Փիլիպ. Ա. 6։

30 · Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք։ Կոլոս. Գ. 4։

31 · Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։ Յովհ. Ժբ. 26։

ՓԵՏՐՈՍԻ

1 · Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ բարձրա-

ցուսցէ՝ի ժամանակի։ 1. Պետ. Ե. 6։

2. Եւ իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ ի՛ս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ։ Եւ ամենայն որ կենդանի է՝ և հաւատայ ի՛ս, մի՛ մեռցի՝ի յաւիտեան։ Յովհ. ԺԱ. 25, 26։

3. Ա՛ստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս։ Պտղ. ԺԸ. 13։

4. Որով՝ ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն մեղացն՝ մարմնոյն նորա։ Կող. Ա. 14։

5. Զնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղաբերք և աճեցունք զիտութեամբն Աստուծոյ։ Կող. Ա. 10։

6. Քրիստոս զնեաց զմեզ յանէծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք։ Գաղատ. Գ. 13։

7. Ի՝ տան Հօր իմոյ օթեվանք բազումք են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։ Յովհ. ԺԴ. 2։

8. Քանզի զիտեմք՝ եթէ երկ-

բաւոր տաճար շինուածոյս մերոյ քակ-
տեսցի , շինած յԱյսուածոյ ունիմք՝
տաճար առանց ձեռագործի , յաւի-
տենական՝ յերկինս : 2 · Կորն · Ե · 1 :

9 · Եւ արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծել 'ի տկարութիւնս , զի բնակեսցէ
յիս զօրութիւնն Քրիստոսի : 2 · Կորն · ԺԲ · 9 :

10 · Զոյնպէս և Քրիստոս միանգամ մատուցեալ պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազմաց · իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ , որ ակն ունիցին նմա հաւատովք 'ի փրկութիւն : Եբրայ · Թ · 28 :

11 · Օրինակ առէք եղբարք՝ չարչարանաց և երկայնմտութեան զմարգարէսն , որ խօսեցան յանուն Տեառն : Յակ · Ե · 10 :

12 · Եւ արիւնն Յիսուսի Որդւոյ Նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց : 1 · Յովհ · Ա . 7 :

13 · Քանզի հաստատեալ եմ , եթէ՝ ոչ մահ , և ոչ կեանք , և ոչ հրեշ-

տակ, և ո՛չ իշխանութիւնք, և ո՛չ որ կանս, և ո՛չ հանդերձեալքն, և ո՛չ զօրութիւնք, և ո՛չ բարձրութիւն, և ո՛չ խորութիւն. և ո՛չ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի Աստուծոյ, որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։ Հռոմ. Ը. 38. 39։

14. Արդ՝ արձակեա՛ զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո։ Ղուկ. Բ. 29, 30։

15. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Մատթ. Ե. 6։

16. Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ 'ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ։ Յովհ. ԺԵ. 7։

17. Սպանէք այսուհետև զանդամս ձեր զերկրաւորս։ Կոլոս. Գ. 5։

18. Եւ 'ի բաց լիցի յանիրաւու-

թենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն։ 2 · Տիմ · բ · 19։

19 · Աղօթից ստէպ կացէք · տքնել 'ի նմին զոհութեամբ։ Կոլոս · դ · 2։

20 · Ողխաղաղութեան զհետ եք թայք ընդ ամենեսին, և զսրբութեան · առանց որոյ ոչ ո՛ք տեսանէցէ զՏէր։ Եբրայ · ժբ · 14։

21 · Այլ հաւատարիմ է Տէր, որ և հաստատեսցէ զձեզ՝ և պահեսցէ 'ի չարէ անտի։ 2 · Թես · գ · 3։

22 · Ընդդարձակ աղօթս արարէք։ 1 · Թես · ե · 17։

23 · Եւ քանն ձեր յամենայն ժամ լիցի շնորհօքն Տեառն Իսուսի աղիւ համեմեալ լիցի, զիտել որպէս արժան իցէ ձեզ խրատանչիւր ումեք տալ պատասխանի։ Կոլոս · դ · 6։

24 · Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք։ Հռով · ժբ · 18։

25 · Օրհնեցէ՛ք զհալածիչս ձեր,

օրհնեցէք և մի անիծանէք։ Հռոմ. ԺԲ. 14։

26. Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհօք առաջի Աստուծոյ և ի մարդկանէ։ Ղուկ. Բ. 52։

27. Ունկնարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկենի իմ զան։ Յովհ. Ժ. 27։

28. Արէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Օն լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրագի։ Մատթ. ԺԱ. 29. 30։

ՍԱՂՄՈՍ։

1. Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։ Մատթ. Ե. 3։

2. Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ։ Յովհ. Գ. 3։

3 · Երանի սգաւորաց , զի նոքա մխիթարեսցին : Մատթ · Ե · 4 :

4 · Զի որ քան Աստուծոյն տրտմութիւն է , ապաշխարութիւն 'ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ · իսկ աշխարհի տրտմութիւն մահ գործէ : 2 · Կորնթ · Է · 10 :

5 · Երանի հեզոց , զի նոքա ժառանգեսցեն զերկիր : Մատթ · Ե · 5 :

6 · Ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ դարձջիք , և եղիջիք իբրև զմանկտի , ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից : Մատթ · ԺԸ · 3 :

7 · Երանի ողորմածաց , զի նոքա ողորմութիւն գտցեն : Մատթ · Ե · 7 :

8 · Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք , զի նոքա զԱստուած տեսցեն : Մատթ · Ե · 8 :

9 · Երանի խաղաղարարաց , զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին : Մատթ · Ե · 9 :

10 · Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան , զի նոցա է

արքայութիւն երկնից։ Մատ. Ե. 10։

11. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։ Մատ. Ե. 6։

12. Զեղեգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, և զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչև հանցէ 'ի յաղթութիւն զդատաստան։ Մատ. ԺԲ. 20։

13. Եկայք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Մատ. ԺԱ. 28։

14. Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է։ Մատ. Ժ. 32։

15. Զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն։ Հռովմ. Ե. 20։

16. Զի որ հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ։ Հռովմ. Ը. 14։

17 · Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ Հռոմ · Ը · 16։

18 · Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա՝ և արդար առ՝ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։ 1 · Յովհ · ա · 9։

19 · Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ՝ի մեզ, զի զՄիածին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ 1 · Յովհ · դ · 9։

20 · Աստուած սէր է · և որ կայ՝ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած՝ի նմա բնակէ։ 1 · Յովհ · դ · 16։

21 · Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք · այլ ընտրեցէք զհոգիսն՝ եթէ յԱստուծոյ իցեն · զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։ 1 · Յովհ · դ · 1։

22 · Ամենևին մի երդնուլ։ Մատթ · Ե · 34։

23 · Արդ՝ եղերուք զուք կատարեալք · որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։ Մատթ · Ե · 48։

24 · Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ղուկ · Ե · 12։

25 · Եւ զուք ո՛չ կամիք գալ առ իս՝ զի զկեանսն ունիցիք։ Յովհ · Ե · 40։

26 · Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել՝ քան մարդկան։ Գործ · Ե · 29։

27 · Այլ զբարիս գործել մի՛ ձանձրացուք, զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ։ Գաղատ · Զ · 9։

28 · Զի մինչդեռ տկարքն էաք՝ Քրիստոս վասն մեր 'ի ժամանակի 'ի վերայ ամբարշտաց մեռաւ։ Հռովմ · Ե · 6։

29 · Յոյսն ո՛չ երբէք ամաչեցուցանէ։ Հռովմ · Ե · 5։

30 · Ամենայն որ քարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի։ Մատթ · Ե · 22։

31 · Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստենին Քրիստոսի : 2 · Կորն · Ե · 10 :

ԷՊԻՍՏ.

1 · Զի և Քրիստոս միանգամ վասն մեղաց 'ի վերայ ձեր մեռաւ, արդարն 'ի վերայ անարդարոց · զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած · 1 · Պետ · Գ · 18 :

2 · Եւ եմ հովիւն քաջ · հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց : Յովհ · Ժ · 11 :

3 · Մի խառնեսցին սիրտք ձեր · այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք : Յովհ · ԺԴ · 1 :

4 · Աղաղէք այսուհետև պատուղ արժանի ապաշխարութեան · Մատթ · Գ · 8 :

5 · Մերձեցարուք առ Աստուած՝ և մերձեսցի առ ձեզ : Յակ · Դ · 8 :

6 · Որպէս զի որ չարչարիցին ըստ

Աստուծոյ կամացն , հաւատարիմ հաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք ։1 · Պետ · դ · 19 ։

7 · Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանուն յայս , թէ դուք քրիստոսի էք , ամէն ասեմ ձեզ մի կորուսցէ զվարձս իւր ։ Մատ · Թ · 40։

8 · Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն · Մատթ · զ · 13 ։

9 · Ահա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի՝ և թողութիւն մեղաց ։ Գործ · Ե · 31 ։

10 · Ապա թէ ոք 'ի ձէնջ ցցէ նըւազեալ յիմաստութենէ , խնդրեսցէ յԱստուծոյ , որ տայն ամենայնի առատապէս՝ և ոչ նախատէ · և տացի նմա ։ Յակ · ա · 5 ։

11 · Խաղաղութիւն թողում ձեզ , զխաղաղութիւն զիմ տամ ձեզ · ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ ։ Յովհ · ժդ · 27 ։

12 · Զվերինն խորհեցարուք , մի

զայս՝ որ յերկրի ասատ է։ Կոր. · Ա · 2։

13 · Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, և առնում զձեզ առիս · զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք։ Յովհ. · ԺԴ · 3։

14 · Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս։ Մատթ. · Ե · 11, 12։

15 · Ասա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մատթ. · Զ · 15։

16 · Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։ Մատթ. · Զ · 21։

17 · Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի զձեզ · Հաստատուն կացէք 'ի սէր իմ։ Յովհ. · ԺԵ · 9։

18 · Զամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա։ Մատթ. · Է · 12։

19 · Արեւ եւ քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ՝ի վերայ բարեկամաց իւրոց։ Յովհ. ԺԵ. 13։

20 · Ո՛ղորմակք՝ պահեցէք զանձինս՝ի կուսապաշտութենէ։ 1. Յովհ. Ե. 21։

21 · Ամենայն բան ազատ՝ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ։ Եփես. Դ. 29։

22 · Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Յովհ. ԺԵ. 14։

23 · Վշտանայցէ ոք՝ի ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք, սաղմոս ասասցէ։ Յակ. Ե. 13։

24 · Զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ։ 1. Յովհ. Ե. 14։

25 · Գիտեմք եթէ ամենայն որ Աստուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ։ 1. Յովհ. Ե. 18։

26 · Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՍրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ եւ զպատուիրանս նորա արասցուք։ 1. Յովհ. Ե. 2։

27 · Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, եւ

զպատուիրանս նորա ոչ պահիցէ , սուտ է՝ և ճշմարտութիւն 'ի նմա ոչ գոյ : 1 · Յովհ · բ · 4 :

28 · Հունձք բազում են՝ և մշակք սակաւ · արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր : Ղուկ · ժ · 2 :

29 · Մի սիրէք զաշխարհ՝ և մի որ ինչ յաշխարհի է : 1 · Յովհ · բ · 15 :

30 · Զայս պատուիրեմ , զի սիրեսջիք զմիմեանս : Յովհ · ժե · 17 :

ՄԱՅԻՍ

1 · Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս , մինչև 'ի կատարած աշխարհի : Մատթ · իը · 20 :

2 · Արդ՝ ապաշաւեցէք և դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր : Գործ · գ · 19 :

3 · Գիտասջիք , զի ոչ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօք փրկեցարուք 'ի ձերոց ունայնութեան

հայրենատուր գնացիցն · այլ պատ-
ուական արեամբն Քրիստոսի , իբրև
անբիծ և անարատ գառին ։ 1 · Պետ ·
ա · 18 , 19 ։

4 · Տէր փրկեա՛ զիս ։ Սաղմ · ժդ ·
30 ։

5 · Քանզի զիտէք զշնորհսն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի · զի վասն
ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր ,
զի դուք նորա աղքատութեամբն մե-
ծասջիք ։ 2 · Կորնթ · ը · 9 ։

6 · Զի ինձ կեանք Քրիստոս է ,
և մեռանել շահ ։ Փիլիպ · ա · 21 ։

7 · Ես եմ լոյս աշխարհի · որ զայ
զկնի իմ , ընդ խաւար մի՛ գնասցէ ·
այլ ընկալցի զլոյսն կենաց ։ Յովհ ·
ը · 12 ։

8 · Զի ամենայն տուրք բարիք՝ և
ամենայն պարգևք կատարեալք՝ ի վե-
րուստ են իջեալ առ՝ ի Հօրէն լուսոյ ·
յորում չի՛ք փոփոխումն՝ և կամ շուր-
ջեալոյ ստուերք ։ Յակ · ա · 17 ։

9 · Տէր , ողորմեաց մեզ որդի Դաւթի : Մատթ · Թ · 31 :

10 · Զի այն՝ որ ո՛չն գիտէր մեղս , վասն մեր մեղս արար · զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ : 2 · Կորն · Ե · 21 :

11 · Եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս · զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր՝ի մեղաց իւրեանց : Մատթ · Ա · 21 :

12 · Ես եմ հովիւն քաջ , և ճանաչեմ զիմն՝ և ճանաչիմ յիմոցն : Յովհ · Ժ · 14 :

13 · Աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ : 2 · Կորն · Ե · 20 :

14 · Եթէ երկու՝ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց , զի՛նչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա՝ի Հօրէ իմմէ՝ որ յերկինս է : Մատթ · ԺԸ · 19 :

15 · Մի ինչ հոգայք · այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք , զոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած : Փիլիպ · Դ · 6 :

16 · Ինպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան , որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս , և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է : Մատ · Ե · 16 :

17 · Ամէն ամէն ասեմ ձեզ · զի որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս : Յովհ · Զ · 47 :

18 · Որ հաւատայ յՄարդին Աստուծոյ , ունի յանձին զվկայութիւնս զայս : 1 · Յովհ · Ե · 10 :

19 · Զի զալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք , և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր : Մատ · ԺԶ · 27 :

20 · Զինչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի , և զանձն իւր տուժեսցէ : Մատ · ԺԶ · 26 :

21 · Ես եմ հացն կենաց · որ գայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ , և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի : Յովհ · Զ · 35 :

22 · Տէր յամենայն ժամ տո՛ւր մեզ զհացն զայն։ Յովհ. Գ. 34։

23 · Եւ քանզի Աստուած էր՝ Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղսս իւրեանց, և եդ՝ի մեզ զբանն հաշտութեան։ 2. Կորնթ. Ե. 19։

24 · Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես՝ի մէջ նոցա։ Մատթ. ԺԸ. 20։

25 · Հաւատարիմ է բանս՝ և ամենայն ընդունելութեան արժանի. զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ. 1. Տիմ. Ա. 15։

26 · Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթուն։ Ղուկ. ԺԲ. 37։

27 · Եւ դուք եղերո՛ւք պատրաստք՝ զի յորում ժամու ո՛չ կարծիցէք, գայ Որդի մարդոյ։ Ղուկ. ԺԲ. 40։

28 · Եւ զամենայն ինչ զոր և խնդ-

ելցէք յաղօթս հաւատովք՝ առնու-
ցուք։ Մատթ. իա. 22։

29. Ընդդադար աղօթս արարէք.
յամենայնի գոհացարո՛ւք. զի այս են
կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսու-
սիւ՝ ի ձեզ։ 1. Թես. Ե. 17, 18։

30. Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ
մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ
բնակեսցէ՝ ի յաւիտեան։ Յովհ. ԺԴ.
16։

31. Ո՛չ թողից զձեզ որբս. գամ
առ ձեզ։ Յովհ. ԺԴ. 18։

ՅՈՒՆԻՍ

1։ Եւ այժմ ո՛րդեակք՝ կացէք՝ ի
նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք
համարձակութիւն, և մի ամաչեսցուք
՝ի նմանէ՝ ի գալստեանն նորա։ 1.
Յովհ. Բ. 28։

2. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ
պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա.

և առ նա եկեսցուք՝ և օթևանս առ նմա արասցուք։ Յովհ. ԺԴ. 23։

3. Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ։ Յովհ. ԺԴ. 24։

4. Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. և ե՛ղիջիք իմ աշակերտք։ Յովհ. ԺԵ. 8։

5. Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի զձեզ։ Յովհ. ԺԵ. 9։

6. Հաստատուն կացէք 'ի սէր իմ։ Յովհ. ԺԵ. 9։

7. Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ։ Յովհ. ԺԵ. 10։

8. Ո՛չ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք։ Յովհ. ԺԵ. 16։

9. Զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Յովհ. ԺԶ. 23։

10. Զրեմ ձեզ ո՛րդեակք՝ զի թողեալ են ձեզ մեղք ձեր վասն անուանն Քրիստոսի։ 1. Յովհ. Բ. 12։

11 · Խնդրեցէ՛ք , և առնուցուք · զի ուրախութիւնն ձեր լցեալ լիցէ ։ Յովհ · ԺԶ · 24 ։

12 · Յաշխարհի ասա նեղութիւն ունիցիք , այլ քաջալերացարուք , զի ես յաղթեցի աշխարհի ։ Յովհ · ԺԶ · 33 ։

13 · Այսուհետև արդարացեալք 'ի հաւատոց անտի , խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Հռովմ · Ե · 1 ։

14 · Որ հաստուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց · որ համբերութեամբ են 'ի գործս բարութեան՝ զփառս և զպատիւ և զանեղծութիւն խնդրեն , զկեանսն յաւիտենից ։ Հռովմ · Բ · 6 , 7 ։

15 · Այս են յաւիտենական կեանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած , և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս ։ Յովհ · ԺԷ · 3 ։

16 · Հաւատա՛ 'ի Տէր Յիսուս Քրիս-

տոս, և ապրեսցիս զու՝ և ամենայն տունքդ։ Գործ. ԺԶ. 31։

17. Յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ։ Հռովմ. Ե. 8։

18. Մի երկնչիր, քայց միայն հաւատա։ Մարկ. Ե. 36։

19. Եւ ամենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ ամաչեսցէ։ Հռովմ. Թ. 33։

20. Զի եթէ մինչ թշնամիքն էաք. հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա. ո՞րչափ ևս առաւել 'ի հաշտելս մերում՝ ապրեսցուք կենաւքն նորա։ Հռովմ. Ե. 10։

21. Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս յԱստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք։ Հռովմ. Ե. 11։

22. Եթէ Աստուա՞ծ 'ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ։ Հռովմ. Ը. 31։

23 · Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի , նեղութիւն՝ թէ անձկութիւն՝ թէ հալածանք՝ թէ սով՝ թէ մերկութիւն՝ թէ վիշտք՝ թէ սուր : Հռոմ · Ը · 35 :

24 · Նոյնպէս և Հոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեան մերում · զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ՝ ո՛չ գիտեմք · այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմբռնչս : Հռոմ · Ը · 26 :

25 · Հոգին մի շիջուցանէք : 1 · Թես · Ե · 19 :

26 · Զի եթէ ՚ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն , ո՞րչափ ևս առաւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և զպարգևաց արդարութեանն առնուցուն , կենաց թագաւորեսցեն ՚ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի : Հռոմ · Ե · 17 :

27 · Արդ՝ ազատացեալք ՚ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեան : Հռոմ · Զ · 18 :

28 · Բայց գիտեմք՝ եթէ ոյոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լի-
նի՛ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչե-
ցան ։ Հռով · Ը · 28 ։

29 · Ամենայն ինչ ձեր է · զուք
Քրիստոսի , Քրիստոս Աստուծոյ · 1
Կորն · Գ · 22 , 23 ։

30 · Առաւել յաղթեմք նովաւ՝ որ
սիրեացն զմեզ ։ Հռով · Ը · 37 ։

ՅՈՒԼԻՈՍ

1 · Եւ արդարանան ձրի նորին
շնորհօք՝ի ձեռն փրկութեան որ՝ի
Քրիստոս Յիսուս ։ Հռով · Գ · 24 ։

2 · Հաւատարիմ է Աստուած , ո-
րով կոչեցարուք՝ի հաղորդութիւն
Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ։1 · Կորն · Ա · 9 ։

3 · Հաւատարիմ է բանս · զի եթէ
ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և կեց-
ցուք ։ 2 · Տիմ · Բ · 11 ։

4 · Եւ՝ի վերայ ամենեցուն մե-

ուաւ , զի որ կենդանի՛ն իցեն՝ մի՛ ան-
ձանց իցեն կենդանի՛ք , այլ այնմ՝ որ
'ի վերայ նոցայն մեռաւ , և յարեաւ ։
2 · Կորն · Ե · 15 ։

5 · Եւ եթէ համբերեսմք , ընդ նմին
և թագաւորեսցուք ։ 2 · Տիմ · Բ · 12 ։

6 · Եւ եթէ չհաւատամք , նա հա-
ւատարիմ մնայ , ուրանալ զանձն իւր
ոչ կարէ ։ 2 · Տիմ · Բ · 13 ։

7 · Եւ եթէ ուրանամք՝ և նա ու-
րանայ զմեզ ։ 2 · Տիմ · Բ · 12 ։

8 · Մի՛ լինիր անհաւատ՝ այլ հա-
ւատացեալ ։ Յովհ · Ի · 27 ։

9 · Այլ հաստատուն հիմն Աստու-
ծոյ կայ՝ և ունի զկնիքս զայս , եթէ
ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են ։
2 · Տիմ · Բ · 19 ։

10 · Ուստի և կենդանի առնել հա-
մօրէն կարող է զմատուցեալս նովաւ
առ Աստուած · քանզի միշտ կենդանի
է՝ լինել բարեխօս վասն նոցա ։
Եբրայ · Է · 25 ։

11 · Ի քաց լեցի յանիրաւութենէ ,

ամենայն որ անուանէ զանուն Տեառն։
2 · Տիմ · բ · 19։

12 · Այլ հաւատարիմ է Տէր, որ
և հաստատեսցէ զձեզ՝ և պահեսցէ
'ի չարէ անտի։ 2 · Թես · գ · 3։

13 · Մի ձանձրանայք զբարիս գոր-
ծել։ 2 · Թես · գ · 13։

14 · Զի որով ինքն չարչարեցաւ
զփորձ առեալ, կարող է և փորձա-
նաւորացն օգնական լինել։ Եբրայ ·
բ · 19։

15 · Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ու-
րացի զանձն, և առցէ զխաչ իւր՝
և եկեսցէ զկնի իմ։ Մատթ · ժզ · 24։

16 · Մի երկնչիր հօտ փոքրիկ · զի
հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զար-
քայութիւն։ Ղուկ · ժբ · 32։

17 · Եւ զուք մի խնդրէք՝ զի՞նչ ու-
տիցէք կամ զի՞նչ ըմպիցէք, և մի
զբաղնուք։ Այլ խնդրեցէք զարքա-
յութիւն Աստուծոյ · և այն ամենայն
յաւելցի ձեզ։ Ղուկ · ժբ · 29, 31։

18 · Որ հաւատայ յՈրդի, ընդունի

զկնոջն յաւիտենականս։ Յովհ. գ. 36։

19. Այլ ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է՝ և ես աշխարհի։ Գաղ. զ. 14։

20. Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Կոլոս. գ. 1։

21. Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս՝ մինչև զՈրդին իւր միածին եւս. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։ Յովհ. գ. 16։

22. Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհս՝ թէ դատեսցի զաշխարհս, այլ զի փրկեսցի աշխարհս նովաւ։ Յովհ. գ. 17։

23. Եւ այս է պատուիրանն նորա՝ զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս։ 1. Յովհ. գ. 23։

24 · Եւ որ պահէ զպատուիրանս նոր-
յա , 'ի նմա է հաստատեալ՝ և նա 'ի
սմա · և յայսմանէ գիտեմք եթէ բնա-
կէ 'ի մեզ 'ի հոգւոյ սմին՝ զոր ետ
մեզ : 1 · Յովհ · գ · 24 :

25 · Բայց արդ աւասիկ միանգամ 'ի-
կատարած յաւիտեանց՝ յանարգու-
թիւն մեղաց իւրով պատարագաւն
յայտնեալ է : Եբրայ · թ · 26 :

26 · Քանզի զնոց զնեցայք · փառա-
ւոր արարէք զԱստուած 'ի մարմինս
ձեր և յոգիս , որ է Աստուծոյ : 1 ·
Կորն · զ · 20 :

27 · Խոնարհեցարուք առաջի Տեա-
ռըն , և բարձրացուսցէ զձեզ : Յակ ·
դ · 10 :

28 · Տէր ամբարտաւանից հակառակ
կայ , ապա շնորհս խոնարհաց : Յակ ·
դ · 6 :

29 · Այսուհետև կայ ինձ արդա-
րութեան պսակն , զոր հատուցցէ
ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն
Դատաւոր · ոչ միայն ինձ , այլև ա-

մեռեալսն՝ որ սիրեցին զյայտնութիւն նորա։ 2 · Տիմ · գ · 8։

30 · Այս ասեմ շնորհքն Աստուծոյ՝ որ տաւեալ են ինձ, ամենայնի որ է՝ի ձեզ · մի՞ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ · այլ խորհել՝ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Աստուած չափի հաւատոյ։ Հռովմ · ժբ · 3։

31 · Եւ ինքն Աստուած խաղաղութեան տուիցէ զձեզ համօրէն։ Ամէն։ Եբրայեցիս · ժգ · 20։

ՕԳՈՍՏՈՍ

1 · Ահա զամ իբրև զգող, երանի՛ որ իցեն արթունք, և պահեսցին զգեստս իւրեանց · զի մի մերկ շրջի

ՀԵՍՑԻՆ, և ԵՐԵՎԵՑԻՆ ԱՄՕԹԱՆՔ ԻՐԵՐԱՆՑ։ ՅՈՎՍ. ԺԷ. 15։

2. ԱՐԹՈՒՆ կացէք և ազօթս արարէք՝ զի մի ՍԱՏԱՆԱՅԻՆՔ ՝Ի փորձութիւն։ ՄԱՏ. ԻԶ. 41։

3. Զի որչափ առեալքն Յաւուրց են՝ ՝Ի նմա այսն. վասն որոյ և նոքին ամէնեն մեօք ՝Ի փառս Յաւուրց։ 2. ԿՈՐՆ. Ա. 20։

4. ՅԻՍՈՒՍ ԱՐԻՍՏՈՍ երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս։ ԵԲՐԱՅ. ԺԳ. 88։

5. ԱՀԱՒԱՍԻԿ կամ ես առ դուռն՝ և բախեմ. եթէ, որ լուիցէ ձայնի իմում՝ և բանայցէ զդուռնն, մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս։ ՅՈՎՍ. Գ. 20։

6. Որ յաղթէ՝ տայց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ Հօր իմոյ։ ՅՈՎՍ. Գ. 21։

7. ԱՅԼ կարիալ է Յաւուրց զամենայն շնորհս առաւելուլ ՝Ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ զամենայն

նայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք յամենայն գործս բարութեան։ 2 · Կորն · Թ · 8։

8 · Քանզի որ սերմանէ ձշդելով՝ ձշդելով և հնձեսցէ · և որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ։ 2 · Կորն · Թ · 6։

9 · Եթէ հաւատարիմ մինչև՝ի մահ, և տայ քեզ զպսակն կենաց։ Յայտ · Բ · 10։

10 · Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան · Տէր մերձ է։ Փիլիպ · Դ · 5։

11 · Այս զրեցի ձեզ՝ զի զիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիք · և զի հաւատայցէք յանուն Որդւոյն Աստուծոյ։ 1 · Յովհ · Ե · 13։

12 · Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ։ 1 · Յովհ · Ե · 14։

13 · Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս յաւիտենական տա մեզ Աս-

տուած · և այս են կիրանք՝ որ յՈրդին նորա են : 1 · Յովհ · Ե · 11 :

14 · Որ ընդունի զՈրդին , ընդունի և զկիրանս · և որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ , և ոչ զկիրանս ընդունի : 1 · Յովհ · Ե · 12 :

15 · Լ՚էր արթուն՝ և հաստատեա՛ այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանել : Յայտ · Գ · 2 :

16 · Երանի մեռելոցն , որք ՚ի Տէր հանգիցին : Յայտ · ԺԳ · 13 :

17 · Ո՛չ եթէ անիրաւ լինէ Աստուած՝ մոռանալ զգործս ձեր և զսէր՝ զոր ցուցանէք յանուն նորա : Եբրայ Զ · 10 :

18 · Զի մի հիւանդամիտք լինիցիք · նմանողք եղերուք այնոցիկ՝ որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն : Եբրայ · Զ · 12 :

19 · Զգաչեմ զձեզ եղբարք զթութեամբքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի՝ սուրբ՝ հաճոյ Աստուծոյ՝ զիւրաքանչիւր պաշտօնդ ձեր : Հռոմ · ԺԲ · 1 :

20 · Զի առժամայն յաշխարհութիւն թեթև նեղութեանս մերում՝ 'ի յաւիտենականն առաւելութիւն զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ : 2 · Կորն · Դ · 17 :

21 · Զի հաւատովք զնամք՝ և ոչ կարծեօք : 2 · Կորն · Ե · 7 :

22 · Յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք : 1 Թես · Ե · 22 :

23 · Այլ շնորհք Աստուծոյ՝ որ է ամենայն զյաղթութիւն 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : 1 · Կորն · ԺԵ · 57 :

24 · Արդ՝ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք, եթէ զինչ և առնիցէք · զամենայն ինչ 'ի փառս Աստուծոյ արասջիք : 1 · Կորն · Ժ · 32 :

25 · Այլ զու ոչ ոքեակ իմ, զօրացիր շնորհօքն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս : 2 · Տիմ · Բ · 1 :

26 · Վշտակից լեր իբրև զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի : 2 · Տիմ · Բ · 3 :

27 · Զի փոքր միւս ևս քան որչափ՝ որ գալոցն է՝ եկեսցէ, և ո՛չ յամեսցէ։ Եբրայ · Ժ · 37։

28 · Պիտոյ է ձեզ համբերութիւն · զի զկամն Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն։ Եբրայ · Ժ · 36։

29 · Դիտէ տէր զաստուածապաշտս փրկել՝ ’ի փորձութենէ։ 2 · Պետ · Բ · 9։

30 Եւ մի՛ տանիր զմեզ ’ի փորձութիւն · այլ փրկեա՛ զմեզ ’ի չարէ։ Մատթ · Զ · 13։

31 · Զի արդարն իմ ’ի հաւատոց կեցցէ · և եթէ յետքինսս որ իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ։ Եբրայ · Ժ · 38։

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 · Այլ եթէ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինիջիք, զի և ’ի յայտնութեան փառացդ

ցէ Յաստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս՝ և ոչ նախատէ. և տայ ցի նմա։ Յակ. ա. 5։

13. Բայց խնդրեսցէ հաւատով՝ և մի երկմտեսցէ։ Յակ. ա. 6։

14. Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ. զի սէրն Յաստուծոյ սիրեալ է 'ի սիրտս մեր 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ։ Հռովմ. ե. 5։

15. Երանի որոց թողան անօրէնութիւնք, և որոց ծածկեցան մեղք իւրեանց։ Հռովմ. դ. 7։

16. Երանելի է այր՝ որում ոչ հաշուարկեսցի Տէր զմեղս նորա։ Հռովմ. դ. 8։

17. Որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Հռովմ. դ. 25։

18. Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեսցէք։ Փիլիպ. բ. 12։

19. Զի Յաստուած է՝ որ յաջողէ 'ի ձեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան։ Փիլիպ. բ. 13։

20 · Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոյ՝ այլ հիւանդաց · և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս : Մատ · թ · 17 :

21 · Պիտոյ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն · զի հաւատարիմ է՝ որ խոստացաւն : Եբրայ · ժ · 23 :

22 · Եւ զգուշացուցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց : Եբրայ · ժ · 24 :

23 · Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն · զի լիցուք զերծեալք 'ի մեղաց անտի , և իցեմք արդարութեանն կենդանիցք : 1 · Պետ · բ · 24 :

24 · Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց · զի եթէ ընտիր եւս գտանիցի , առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւն սիրելեաց իւրոց Տէր : Յակ · ա · 12 :

25 · Ոչ յամենուսցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին · այլ երկայնամիտ լինի առ ձեզ · քանզի

ոչ կամի եթէ ոք կորիցէ , այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն: Ղ · Պ։-Ա · Ղ · 9 :

26 · Տեսէք՝ որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր · զի որդիք Աստուծոյ կոչեսցուք և մեք : 1 · Յովհ · Ղ · 1 :

27 · Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք , և չևևս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք · գիտեմք , զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք , զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն : 1 · Յովհ · Ղ · 2 :

20 · Ցե եթէ երթամ՝ և պատրաստեմ ձեզ տեղի , դարձեալ գամ , և առնուում զձեզ առ իս · զի ուր եմն իցեմ , և դուք անդ իցէք: Յովհ· ԺԴ· 3 :

29 · Հպարտութիւն զամենայն 'ի բաց ընկեսցուք , և զմեղս կարևորս · համբերութեամբ ընթացցուք 'ի պատերազմն՝ որ առաջի կայ մեզ : Եբրայ · ԺԲ · 1 :

30 · Հայեսցուք 'ի Օրդագլուխն հաւատոյ , և 'ի կատարիչն Յիսուս :

Եբրայ · ԺԲ · 1 :

ՀՈԳՏՆՈՐՆԵՐ

1 · Որով և զընծայութիւն ընկալաք հաւատովք 'ի շնորհս յայսմիկ՝ յորում կամք, և պարծիմք յուսով փառացն Աստուծոյ։ Հռովմ. Ե. 2։

2 · Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր։ 1. Յովհ. գ. 10։

3 · Զի ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց։ Հռովմ. ա. 16։

4 · Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառաւք իւրովք՝ և Հօր՝ և հրեշտակաց սրբոց։ Ղուկ. թ. 26։

5 · Թէ ահաւասիկ գնեմ 'ի Սիովն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական. և որ 'ի նա հաւատասցէ՝ մի՛ ամաչեսցէ։ 1. Պետ. բ. 6։

6 · Զէգ այսուհետև հաւատացելոց է վէմ պատուական։ 1. Պետ. բ. 7։

7 · Եւ ծարաւելոցն տամ յաղ-
բերէ ջրոյ կենաց ձրի։ Յայտ · իա · 6։
8 · Այլ ջուրն՝ զոր ես տայց նմա,
եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ՚ի-
կեանան յաւիտենականս։ Յովհ · դ · 14։
9 · Տէր, տո՛ւր ինձ զջուրն զայն,
զի մի՛ ծարաւեցիցց։ Յովհ · դ · 15։
10 · Այլ հաւատալ արժան է այ-
նքամ որ մերձենայ առ Աստուած՝ թէ
է Աստուած, և որ խնդրեսցեն զնա՝ լինի
պարգևատու։ Եբրայ · ժա · 6։
11 · Աստուածպաշտութիւն առ ա-
մենայն ինչ ծգտակար է, և զաւետիս
կենաց ունի՝ զարդիս և զհանդերձե-
լոցն։ 1 · Տիմ · դ · 8։
12 · Այլ շահավաճառ մեծ Աստու-
ածպաշտութիւն է բաւականութեամբ
հանդերձ։ 1 · Տիմ · զ · 6։
13 · Ո՞չ ապաքէն ամենեքեան հո-
գիք են հարկաւորք՝ որ առաքին ՚ի
սպասաւորութիւն վասն այնոցիկ,
որ ժառանգելոցն են զփրկութիւն։
Եբրայ · ա · 14։
14 · Ո՛չ եթէ դուք ընտրեցիք զիս ·

այլ ես ընտրեցի զձեզ և եղի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կացցէ. և զոր ինչ խնդրիցէք՝ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Յովհ. ԺԵ. 16։

15. Ո՛չ ես կոչեմ զձեզ ծառայս. զի ծառայն ոչ գիտէ զի՞նչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն՝ զոր լուայ՝ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Յովհ. ԺԵ. 15։

16. Զի զենար՝ և գնեցեր զմեզ Որդւոյ արեամբդ քով։ Յայտ. Ե. 9։

17. Եւ Որդւոյն խաղաղութեան խորտակեսցէ զՍատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ։ Հռոմ. ԺԶ. 20։

18. Երթա՛ն լերուք՝ և հսկեցէք. զի ոսոխն ձեր Սատանայ իբրև զառիւծ գոչէ. շրջի, և խնդրէ՝ թէ զո՞ կլանիցէ։ 1. Պետ. Ե. 8։

19. Որում՝ի գիմի հարկանիցիք

հաստատեալք հաւատովք։ 1 · Պետ · Ե · 9։

20 · Որ յաղթէ, ժառանգեսցէ զայս ամենայն. և ես եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ որդիք։ Յայտ · ԻԱ · 7։

21 · Ապա թէ ոչ ես ժառայ, այլ որդի. եթէ որդի՝ և ժառանգ Աստուծոյ։ Գաղատ · Դ · 7։

22 · Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Հայր զթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեան. Որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր։ 2 · Կորն · Ա · 3, 4։

23 · Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս։ 1 · Յովհ · Բ · 25։

24 · Ով ո՛չ կարէ զալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց, ձգեսցէ զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Յովհ · Զ · 44։

25 · Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Ար-

տուած զննչեցեալսն 'ի ձեռն Յիսուս սի ածցէ ընդ նմա ։ 1 · Թես · գ · 13 ։

26 · Եւ ես եմ կեանք՝ և ես նոյն որ մեռայ , և եմ կենդանի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն · և ունիմ զբանալիսն մահու և զժոխոց ։ Յայտ · ա · 18 ։

27 · Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ 'ի վերս է քան զամենայն միտս , պահեսցէ զսիրտս ձեր , և զմիտս 'ի Քրիստոս Յիսուս ։ Փիլիպ · դ · 7 ։

28 · Եւ ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ՝ յամենայն իրս · Տէր ընդ ամենեսին ը ձեզ ։ 2 · Թես · գ · 16 ։

29 · Զի աչք Տեառն 'ի վերայ արդարոց , և ականջք նորա յաղօթս նոցա ։ 1 · Պետ · գ · 12 ։

30 · Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ մի՛ անցցեն ։ Մատ · իգ · 35 ։

31 · Զի ամենայն որ հաւատայ 'ի նա՝ մի՛ կորիցէ , այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս ։ Յովհ · գ · 15 ։

1 · Որ հաւատայ՝ ինքն, ոչ դատապարտեսցի · և որ ոչ հաւատայ՝ ինքն արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ : Յովհ · գ · 18 :

2 · Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից : Մատթ · ժգ · 43 :

3 · Բայց յայտնեցար այժմիկ յետքեւել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահն և լուսաւոր արար զկեանս և զանեղծութիւն՝ ի հեռն աւետարանին : 2 · Տիմ · ա · 10 :

4 · Հաստատեալ եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն : 2 · Տիմ · ա · 12 :

5 · Բանդինոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին՝ որք կարդան առնա : Հռովմ · ժ · 12 :

6 · Զի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն, կեցցէ : Հռովմ · ժ · 13 :

7 · Որով առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդմամբ։ Եբրայ · Զ · 17։

8 · Զի երկու անփոփոխելի իրօքն որովք անհնարին էր ստել Աստուծոյ, հաստատուն միխիթարութիւն ունիցիմք, որք ապաստան եղաք բռնել հարկանել զհանդերձեալ յուսոյն։ Եբրայ · Զ · 18։

9 · Զոր իբրև զխարիսխ հաստատուն և անշարժ ունիցիմք անձանց մերոց, որ և մտանիցէ՝ ի ներքին կողմն վարագուրին։ Եբրայ · Զ · 19։

10 · Ուր Կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւիտենից։ Եբրայ · Զ · 20։

11 · Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Ղուկ · Է · 48։

12 · Ոչ մեռանն վասն մեր · զի եթէ արթուն իցեմք՝ և եթէ ննջիցեմք,

նովաւ հանդերձ կեցցուք։ 1 · Թես · Ե · 10։

13 · Տէր Յիսուս՝ ընկալ զոգի իմ։ Գործ · Է · 58։

14 · Փառք ՝ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ՝ի մարդիկ հաճութիւն։ Լուկ · Բ · 14։

15 · Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս · եթէ Աստուած ՝ի մեր կոյս է, ո՞վ ի՞ցէ մեր հակառակ։ Հռովմ · Ը · 35։

16 · Իսկ արդ՝ ո՛վ է որ դատապարտառնիցէ · Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն՝ մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր։ Հռովմ · Ը · 34։

17, Եւ ընթեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա · և մահ ո՛չ ևս զոյ, ո՛չ սուգ · և ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւք՝ և ո՛չ աշխատանք ոչ ևս զոյ, զի առաջինն էանց։ Յայտ · իա · 4։

18 · Եւ ասաց ցիս՝ որ նստէր ՝ի վե-

բայ աթոռոյն , Ի հաւասիկ առնեմ զամենայն նո՛ր : Յայտ . իա . 5 :

19 . Ի՛հա զամ վաղվաղակի՝ և վարձք իմ ընդ իս , հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց : Յայտ . իբ . 12 :

20 . Իբրև ո՛չ եթէ զ՝այր ուրուք տեսեալ իցէ . եթէ ոչ՝ որ էն յ՚Ա՝ստուծոյ , նա եառեալ զ՝այր : Յովհ . գ . 46 :

21 . Եւ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ , և որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի : Յայտ . իբ . 17 :

22 . Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք . իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք : Հռովմ . ը . 13 :

23 . Որպէս զի որ չարչարիցին ըստ Ստուծոյ կամացն , հաւատարիմ Ստեղծին աւանդեսցեն զիւրեանց ո՛ղիս բարիարարութեամբք : 1 . Պետ . դ . 19 :

24 · Եղերուք սուրբ՝ զի ես սուրբ եմ։ 1 · Պետ · ա · 16։

25 · Զամենայն հոգս ձեր ընկեցէք ՚ի նա, զի նա է՝ որ հոգայ վասն ձեր։ 1 · Պետ · Ե · 7։

26 · Մի զանձանց և եթե զիտելոյալ իւրաքանչիւր ոք զընկերին։ Փիլիպ · բ · 4։

27։ Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ, որ և ՚ի Քրիստոս Յիսուս։ Փիլիպ · բ · 5։

28 · Հնազանդեցարուք այսուհետև Աստուծոյ · և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախստական առ ՚ի ձէնջ։ Յակ · դ · 7։

29 · Զնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի՝ և թողութիւն մեղաց։ Գործ · Ե · 31։

30 · Եղիցի ամենայն մարդ արագ առ ՚ի լսել, և ծանր առ ՚ի խօսել, և ծանր առ ՚ի բարկանալ։ Յակ · ա · 19։

ԳԼԽԱՏԵՍՏՈՒՆ

1 · Եա եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է։ Յովհ. ԺԵ. 1։

2 · Զամն որոյ՝ի բաց ընկեցէք զատուութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք։ Եփես. Դ. 25։

3 · Ամենայն բան ազեղ՝ի բերանոյ ձերում մի ելցէ, այլ որ ինչ բարին է՝ի շինած պիտոյից. զի տացէ շնորհս այնոցիկ, որ լսեն։ Եփես. Դ. 29։

4 · Եւ չի՛ք այլով իւիք փրկութիւն. զի և ոչ անուն այլ զոյ՝ի ներքոյ երկնից տուեալ՝ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ։ Գործք. Դ. 12։

5 · Երա՛ւք ընդ միմեանս քաղցունք՝ զթածք, շնորհեալ միմեանց, որպէս և Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ։ Եփես. Դ. 32։

6 · Հաստատեալ եմ և ես ինքնին

եղբարք իմ՝ վասն ձեր , զի և դուք
լի էք բարութեամբ , լի էք ամենայն
գիտութեամբ , կարող էք և զմիմեանս
խրատել : Հռոմ. ԺԵ. 14 :

7. Զի թէպէտ և երբեմն էիք
խաւար , արդ լոյս էք 'ի Տէր. իբրև
զորդիս լուսոյ գնացէք : Եփես. Ե. 8 :

8. Փորձեցէք զինչ է հաճոյ Տեառն
ն : Եփես. Ե. 10 :

9. Զի ճշիգարեսցին սիրտք նո-
ցա տեղեկացեալք սիրով , և յամենայն
մեծութիւն լրութեան իմաստութեան
'ի գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ
Հօր'ի Քրիստոս Յիսուս: Կոլոս. Բ. 2:

10. Ամենայն խոնարհութեամբ՝ և
հեզութեամբ. և երկայնմտութեամբ՝
անսալ միմեանց սիրով : Եփես. Դ. 2 :

11. Եթէ մեռարուք ընդ Քրիս-
տոսի 'ի տարերց աշխարհիս՝ զի՞ ևս
իբրև զկենդանիս աստէն յաշխարհի
կրօնաւորիք : Կոլոս. Բ. 20 :

12. Յամենայն ժամ զմահն Յիսուսի
'ի մարմնիս մեր կրեսցուք , զի և

կեանքն Յիսուսի 'ի մարմնոյն մեր յայտնեսցին։ 2 · Կորնթ · գ · 10։

13 · Զոյշ լերուք, մի՛ ոք լցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ և մնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարերց աշխարհիս, և ո՛չ ըստ Յիսուսի Քրիստոսի։ Կոլոս · բ · 8։

14 · Ուղղեմք զձեզ եղբարք՝ խրատեցէք զանառակս, մխիթարեցէք զկարճարամիտս, պատասխանեալ լերուք ոչիարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսեան։ 1 · Թես · Ե · 14։

15 · Զի բանն Քրիստոսի բնակեսցէ 'ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս. սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգեւորօք՝ և շնորհօք օրհնել 'ի սիրտս ձեր զՏուտուած։ Կոլոս · գ · 16։

16 · Զոյշ լերուք՝ զուցէ ոք չարի չար հատուցանիցէ · այլ յամենայն ժամ զբարեաց զհետ երթայք առ մի-

մեանս՝ և առ ամենեսեան : 1 · Թես · Ե · 15 :

17 · Յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք : 1 · Թես · Ե · 22 :

18 · Արդ՝ 'ի բաց թողեալ եղեցէք և զուք զայն ամենայն , զբարկութիւն զսրտմտութիւն , զչարութիւն , զհայհոյութիւն , զխեղկատակութիւն 'ի բերանոյ ձերոյ : Կող · Գ · 8 :

19 · Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱստուած , և որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : 2 · Թես · Ա · 8 :

20 · Որ բարեաւք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին , մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ : 1 · Տիմ · Ե · 17 :

21 · Եւ զամենայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք , զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք , զո-

հայծոցք լինիջիք զԱստուծոյ և զ՝օրէն նովաւ։ Կոչս · Գ · 17։

22 · Այլ ՏԷր ուղղեսցէ զսիրտս ձեր 'ի սէրն Աստուծոյ՝ և 'ի համբերութիւնն Քրիստոսի։ 2· Թես · Գ · 5։

23 · Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական իցեն և զայլս ուսուցանել։ 2 · Տիմ · Բ · 2։

24 · Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ և յանդիմանութիւն և յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան։ 2 · Տիմ · Գ · 16։

25 · Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեա՛լ լիցի։ Գաղատ · Ա · 8։

26 · Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան։ 2 · Տիմ · Բ · 15։

27 · Այսուհետև եղբարք՝ աղօթս արարէք՝ի վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ, և փառաւոր լինի՝ ցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզդ։ 2 · Թես · Գ · 1։

28 · Նմա ամենայն մարդարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝ ամենայն հաւատացելոց՝ի նա։ Գործ · Ժ · 43։

29 · Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մատ · Զ · 15։

30 · Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։ Մատ · Զ · 21։

31 · Եւ որ ո՛չ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի։ Մատ · Ժ · 38։

ՎԵՐՋ։